

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/3

27 հուլիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.07.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանի 25.06.2012թ-ին ՀՀ Նախագահին հասցեագրված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 23.04.2012թ. թիվ 2114480 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 12.04.2012թ. թիվ 2114480 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 23.04.2012թ-ին կազմվել է թիվ 2114480 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչներ Արգամ Մակարյանը և Երվանդ Մայիլյանը 12.04.2012թ. ժամը 12:40-ին Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանին պատկանող ք.Արմավիր, Գորկու 117 հասցեում գտնվող խանութից կատարեցին գնում՝ 5 հատ մեխակ 800 դրամ ընդհանուր արժողությամբ, որի գումարը Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և չտրամադրվեց ՀԴՄ կտրոն գանձած գումարի չափով: Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: <Z> հաշվետվությունը հնարավոր չեղավ դուրս բերել ՀԴՄ-ի խափանված լինելու պատճառով: Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանին <հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասի համաձայն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանի ՀՀ Նախագահին հասցեագրված գանգատում մասնավորապես նշված է.

Արմավիր քաղաքում ես ունեմ ծաղկի վաճառքի սրահ, որը գործում է մոտ վեց ամիս: Այս ընթացքում բարեխղճորեն կատարել եմ բոլոր պետական վճարումները չնայած նրան, որ աշխատել եմ վնասով՝ օրական 1000-2000 դրամ: Եղել նաև օրեր, որ անգամ առևտուր չի եղել, հաճախորդներին պարտաճանաչ տրամադրել եմ ՀԴՄ կտրոնները:

Մոտ երկու ամիս առաջ, առավոտյան ժամը 11:00-ի սահմաններում, գնացի ծաղկի սրահ՝ ՀԴՄ խափանված ապարատը ստուգման տանելու նպատակով: Սրահում միայն ես էի: Այն պահին, երբ պատրաստվում էի դուրս գալ հայտնվեց «հատուկ հաճախորդը», նայեց չորս կողմը, տեսնելով, որ սրահում ծաղիկ չկա, խնդրեց դուրսի մեջ եղած տաս մեխակներից իրեն վաճառել: Ես հրաժարվեցի, պատճառաբանելով, որ ՀԴՄ ապարատը խափանվել է և այն տանում եմ վերանորոգման: Նա աչքերը լցրեց, շատ խնդրեց և ես ստիպված նրան վաճառեցի վեց հատ մեխակ: Ծաղիկները վերցնելուց անմիջապես հետո սրահ մտան հարկային տեսուչները՝ խախտում գտնելու նպատակով:

Ես նրանց անմիջապես տեղեկացրեցի, որ խափանված ապարատը չի աշխատում և այն տանում եմ վերանորոգման: Նրանք տեսնելով, որ սրահում նույնիսկ ծաղիկներ չկան, գրանցեցին ՀԴՄ կտրոն չտրամադրելու հարկային խախտում, որի արդյունքում ինձ տուգանեցին 150.000 դրամ, առավել՝ 20.000 դրամ, որպես վարչական տուգանք: Երկու ամսվա ընթացքում այս գումարը կրկնապատկվեց:

Իմ ամսական աշխատավարձը կազմում է ընդամենը 50.000 դրամ, ամուսինս չունի մշտական աշխատանք և ես մի կերպ հոգում եմ թե ընտանիքիս կարիքները և թե երկու անչափահաս երեխաներիս հոգսերը, ուստի այսօր ի վիճակի չեմ նման գումարներ վճարելու:

Ա/Ձ Սուսաննա Ղուկասյանը խնդրում է հարցը վերանայել և հանել տուգանքը:

